ՀՈՐ ՆԱՄԱԿԸ ՈՐԴՈՒՆ

Ստորև զետեղում ենք մի հատված Առամել Քեչյանի, 1948 թ. նոյեմբերի 12-ին, գրած նամակից, որը հասցեագրված է իր որդի, Հոգևոր հեմարանի սան, Արամ Քեչյանին.

ԽՄԲ.

12 նոյեմբեր 1948 թ. Պուքրեշ

Սիրելի Արամ.

Երկար և սրտահատնում սպասումե ետք, այսօր մեծ ուրախությամբ ստացա հոկտ. 12 թվակիր կարոտալի նամակդ։ Այդ ուրախությունը քանի մը պատճառներով զգացի, որոնք պարզաբանել քեզ համար օգտակար կնկատիմ, ուստի մտիկ ըրե։

Ուրախացա, որովհետև լսեցի ճեմարան ընդունվիլդ, որ նախադուռն է ապագայիդ։ Էջմիածինը դարերով հայ մտքին ու հոգիին

Արամ Քեչյան

ներշնչարանն եղած է և ներկայիս ալ, իբր այդ, այն կշարունակե իր երկնառաք դերը, նույն կորովով ու նույն թափով, որուն աշակերտիլդ ինձ կներշնչե հավատք, որ պիտի կարենաս անոր մեջ մշակել միտքդ, կրանալ ու կոփել նկարագիրդ ու ազնվացնել հոգիդ։

Ուրախացա, որովհետև լույսի այս օճախին մեջ դուն պատեհություն պիտի ունենաս հմտանալու մայրենի լեզվիդ հետ նաև ոտաերենի, և անոնց գրականության զմայլելի նրբություններուն, այսպիսով հետևելով հորդ, կատարելության հասցնելով անոր սկսածը. եթե հայ գրչի ու մտքի անդաստանին մեջ ես չկարողացա արժեքավոր ամուն մը թողուլ, ապահովաբար դուն կհաջողիս, սիրելի զավակս։

Հասարակության ծառայել և բարի հիշատակ ձգել, քու մեջ փոքրուց նշմարված ձգտումներ են։ Դուն այդ բանեն թելադրված նախընտրեցիր Սովետական Հայրենիքիդ կրթական հաստատությունները ու ես ալ քու ապագայիդ սիրուն հանձն առի զավկես բաժնվելու զրկանքն ու կարոտը, ուստի ջանա կուրծք տալ ամեն դժվարությանց և հասնիլ նպատակիդ։

Սիրելի Արամ, նպատակս է քեզ հասկցնել, որ ճեմարան ընդունվիլդ մեծ բախտավորություն է մեզ համար, որովհետև հոն է, որ պիտի արժեցնես կարողություններդ, որովհետև ես քու մեջ ավելի ուժեղ կգտնեմ հորդ ասպարեզին հետևելու ընդունակությունները և այդ ընդունակությունները արժեցնող տրամաբանական լավագույն վայրն է Էջմիածնի ճեմարանը։

Կհուսամ շուտով սիրելի պիտի դառնաս թե՛ ուսուցիչներուդ և թե՛ ընկերներուդ։ Քեզ կթելադրեմ հարաբերվիլ Գ դասարանի սաներեն Քաջիկ Գևորգյանի, Ռուբեն Մարտիրոսյանի և մանավանդ Հրանտ Վարուժյանի հետ, որոնց գրչին պտուղները համտեսած եմ «Էջմիածին» հանդեսի մեջ և հեռուեն սիրած ու համակրած եմ իրենց՝ հավատալով, որ եթե դեմքը հայելին է սրտին, գրչին ալ կպատկերացնե հոգին մարդուն։ Սրտով ու հոգիով հարուստ ու գեղեցիկ այդ երրորդության հետ կարժե որ մտերմանաս. իմ սիրո և համակրանքի ողջույններս տար անոնց։

Կարոտի համբույրներով նամակիդ սպասող հայրդ՝

Ա. ՔԵՉՅԱՆ